



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
 ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
 հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com



31 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թ.
ԹԻՎ 1430

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ
 ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

***Սիրելի ուսուցիչներ, աշակերտներ, գիտության և կրթության գործի
 նվիրյալներ***

Շնորհավորում եմ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի և դպրության օրվա առիթով, որով սկսվում է հույսերով լի ուսումնական տարին, գիտելիքներով հարստանալու ու նոր արժեքներ ճանաչելու շրջանը:

Առանձնահատուկ շնորհավորում եմ առաջին դասարանցիներին: Ցանկանում եմ, որ ուսումնառության այս տարիները ձեզ համար լինեն ամենահիշարժանն ու ամենաարդյունավետը:

Օրվա առիթով ցանկանում եմ նաև երախտագիտության խոսքը հղել մեր ուսուցիչներին՝ մեծ նվիրումով ու բարձր պատասխանատվությամբ իրենց առջև դրված կարևոր առաքելությունն իրականացնելու համար:

***Սիրելի ուսուցիչներ, աշակերտներ, գիտության և կրթության գործի
 նվիրյալներ***

Մաղթում եմ ձեզ նորանոր գիտելիքներով, հաջողություններով ու ձեռքբերումներով լի ուսումնական տարի:

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ